Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 27-ի
№563Ա որոշմամբ

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

«ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման համար 935-947,5ՄՀց / 890-902,5ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվության (թույլտվություն №0855, տրված՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 27-ի №563Ա որոշմամբ)

1. Սահմանումները

1. Սույն թույլտվությունում գրված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ՝

<u>հանձնաժողով՝</u> Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

<u>թույլտվություն ունեցող անձ կամ լիցենզավորված անձ՝</u> «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերություն.

<u>թույլտվություն՝</u> հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականությունների որոշակի հատված օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.

<u>ֆորս մաժոր՝</u> արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես օրինակ ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հոկտեմբերի 27-ից:

3. Սույն թույլտվությունը գործում է մինչև 2013 թվականի մարտի 3-ը:

3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությամբ լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման համար օգտագործել 935-947,5ՄՀց/890-902,5ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածները:

4. Լիցենզավորված անձի գործունեությունը

5. Լիցենզավորված անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:

6. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Լիցենզավորված անձի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց առաջ լիցենզավորված անձը պարտավոր է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստանալ հանձնաժողովի համաձայնությունը:

8. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ օգտագործումը:

9. Լիցենզավորված անձը պարտավոր է իր տնօրինության կամ տիրապետման տակ գտնվող սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել քաղաքացիների սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

10. Լիցենզավորված անձը պարտավոր է հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները:

11. Լիցենզավորված անձը, հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել հանձնաժողով:

5. Գործունեության վերահսկումը

12. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է հանձնաժողովը:

13. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով հանձնաժողովը կամ նրա լիազոր ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումնիրականացնելու ընթացքում լիցենզավորված անձը պարտավոր է լիովին համագործակցել և աջակցել հանձնաժողովին կամ նրա լիազոր ներկայացուցիչներին:

14. Հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչները լիցենզավորված անձի տարածքում պահպանում են լիցենզավորված անձի ներքին կանոնակարգը, անվտանգության կանոնները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

15. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր ներկայացուցիչների միջոցով, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

6. Պատժամիջոցները

16. Լիցենզավորված անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում հանձնաժողովն իրավասու է իր կողմից սահմանված կարգով կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

1) տույժերի և տուգանքների կիրառում.

2) թույլտվության փոփոխում.

3) թույլտվության կասեցում.

4) թույլտվության գործողության դադարեցում:

17. Համաձայն թույլտվության 16-րդ կետի՝ լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորի հետևանք են: